

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

24.11.2017

Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի բոլոր անդամները.

ՕՐԱԿԱՐԳ

1. Կրթական ծրագրերի առաջարկի հայտեր: /Ձեկուցող՝ Ա. Ներսիսյան/

Օրակարգի հարցի վերաբերյալ զեկուցողը ներկայացրեց, որ համաձայն ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի 13 հոկտեմբերի թիվ 240 § 4 հրամանի հաստատած ժամանակացույցի, ֆակուլտետում ըստ մասնագիտությունների ձևավորվել են յուրաքանչյուր կրթական ծրագիրը վերամշակող աշխատանքային խումբ:

Նա նշեց, որ կրթական ծրագրերի մշակումը կարևոր և անհրաժեշտ նախապայման է ծրագրային հավատարմագրման համար: Կրթական ծրագրերի վերամշակված տարբերակը կնպաստի մասնաճյուղի ռազմավարական ծրագրի իրականացմանը, կօգնի ուսումնառության և գնահատման բազմազան և արդիական մեթոդների ճիշտ կիրառմանը՝ կրթական վերջնարդյունքներում ունենալու մասնագիտական հարուստ գիտելիքներ և իմացություն, գործնական մասնագիտական ընդհանրական հարողություններ, որոնք շրջանավարտներին ապագա կարիերայի լայն հնարավորություններ կտան և կհամապատասխանեն տվյալ մասնագիտության ոլորտում աշխատաշուկայի առաջադրող պահանջներին:

Աշխատանքային խմբերը նոյեմբերի 15-30 ընկած ժամանակահատվածում պետք է ձևակերպեն իրենց ծրագրերի առաջարկի հայտը և ներկայացնեն ՄԿՈԱ բաժին:

Ձեկուցողը ներկայացրեց, որ սթ. նոյեմբերի 22-ին բոլոր աշխատանքային խմբերը իրականացրել են քննարկումներ/Արձանագրությունների քաղվածքները կցված են՝

Այնուհետև մանրամասն քննարկվեցին հայտերի առաջարկները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Ա. Մարիատյանը, հ.գ.թ., ասիստենտ Ա. Քամալյանը, պ.գ.թ. Ն. Գրիգորյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, դասախոս Ա. Սիմոնյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հավանության արժանացնել ներկայացված հայտերը և այն ներկայացնել ՄԿՈԱ բաժին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. Ներսիսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Վ. Աղաբաբյան

ՔԱՂՎԱԾՔ

ԵՊՀ ԻՄ-ի Հ/Գ ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի «Հայոց լեզվի և գրականության» կրթական ծրագրի վերամշակման աշխատանքային խմբի՝ կրթական ծրագրի առաջարկի հայտի քննարկման առիթով ս/թ նոյեմբերի 22-ին կայացած նիստի N 1 արձանագրության /Ձեկուցող՝ Ա. Սարհատյան/:

Նիստին մասնակցում էին աշխատանքային խմբի բոլոր անդամները:

ԼՄԵՑԻՆ – «Հայոց լեզվի և գրականության» կրթական ծրագրի առաջարկի հայտի (6, 7, 8, 11, 12 կետեր) վերամշակման հարցը:

Հաղորդումով հանդես եկավ կրթական ծրագրի պատասխանատու Ա. Սարհատյանը: Նա նշեց, որ հայոց լեզվի ու գրականության կրթական ծրագրի մշակումը կարևոր և անհրաժեշտ նախապայման է ծրագրի հավատարմագրման համար: Կրթական ծրագրի վերամշակված տարբերակը կնպաստի ԵՊՀ ԻՄ-ի և ֆակուլտետի ռազմավարական ծրագրերի իրականացմանը, կօգնի ուսումնառության և գնահատման բազմազան ու արդիական մեթոդների ճիշտ ու նպատակասլաց կիրառմանը՝ կրթական վերջնարդյունքներում ունենալու մասնագիտական հարուստ գիտելիքներ և իմացություն, գործնական մասնագիտական ընդհանրական /փոխանցելի/ կարողություններ, որոնք շրջանավարտներին ապագա կարիերայի լայն հնարավորություններ կտան և կհամապատասխանեն տվյալ մասնագիտության ոլորտում (աշխատաշուկա) ՄԿԾ շրջանավարտին առաջադրվող պահանջներին:

Նա առաջարկեց քննարկել ուսումնական պլանի նախագիծը, ծրագրի ընդհանուր կառուցվածքը, բակալավրի հիմնական, մասնագիտական, հատուկ մասնագիտական և կրթական այլ մոդուլների բովանդակությունը և հանդես գալ առաջարկություններով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա. Հասանյանը, Կ. Պողոսյանը, Լ. Թումանյանը:

Ա. Հասանյանն առաջարկեց սահմանել և մշակել ուսանողների աջակցման ծառայություններ և ստեղծել անհատականացված ռազմավարություն՝ օժանդակելու ուղղորդման կարիք ունեցող ուսանողներին: Նա նշեց, որ վերամշակված ծրագրի կրթական վերջնարդյունքները կապահովեն որակի նորագույն պահանջները, շրջանավարտների կարիերայի հնարավորությունները, կհամապատասխանեն

միջազգային չափանիշներին: Նա առաջարկեց վերանայել առարկայական-
ուսումնական փաթեթները՝ դրանք համահունչ դարձնելով ուսումնական պլանի
ընդհանուր կրթական կառուցամասին:

Կ. Պողոսյանը առաջարկեց ծրագրի նպատակների հաջող իրականացման
համար կիրառել ժամանակակից նոր տեխնոլոգիաներ, էլեկտրոնային
դասախոսություններ, առցանց ուսուցում: Նա նշեց, որ պետք է կիրառել
դասավանդման և ուսումնառության արդիական մեթոդները, որոնց թվում են
էվրիստիկական մեթոդը, մտագրոհը, դերային խաղերը, դեդուկտիվ և ինդուկտիվ
մեթոդները, ցուցադրումը, տարաբնույթ գրավոր աշխատանքները (թեզիս, էսսե,
շարադրություն, ռեֆերատ):

Լ. Թումանյանը նշեց, որ «Հայոց լեզվի և գրականության» կրթական ծրագիրն
իրականացնող բոլոր դասախոսները ապահովում են «Լիցենզիայի մասին» օրենքով
սահմանված ձևաչափի պահանջները: Հաշվի առելով գիտության և մշակույթի
զարգացման հարահոս ընթացքը, մասնագիտական և տեղեկատվական ոլորտի
պահանջները, ուսուցման արդի ձևերին ու տեխնոլոգիաներին իրազեկված լինելու
անհրաժեշտությունը՝ պետք է կարևորել մասնագիտական վերապատրաստումները:
Դրանք պետք է լինեն պարբերաբար, քանի որ պետք է շարունակաբար իրազեկվել
գիտական նոր զարգացումների պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել «Հայոց լեզվի և գրականության» կրթական ծրագրի
վերամշակման աշխատանքային խմբի առաջարկությունները:

Նախագահ՝ / / Ա. Սարհատյան
Քարտուղար՝ / / Ա. Ադամյան

Քաղվածք

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Մանկավարժություն և հոգեբանություն» ամբիոնի «Ընդհանուր մանկավարժություն» կրթական ծրագրի վերամշակման աշխատանքային խմբի հանդիպումը կրթական ծրագրի առաջարկի հայտի ձևակերպման համար 22.11.2017թ կատարված նիստի

Նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչի ժ/պ, մ.գ.թ., ասիստենտ Լ. Հարությունյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը, հ.գ.թ., ասիստենտ Ա. Քամալյանը, դասախոսներ Է. Սիմոնյանը, Վ. Մելիքսեթյանը, Հ. Սայադյանը, Ի. Պոնոմարենկոն, քարտուղար՝ Լ. Ստեփանյանը:

Օրակարգ

1. «Ընդհանուր մանկավարժություն» կրթական ծրագրի առաջարկի հայտի /6,7,8,11,12 կետեր/ վերամշակման հարցի մասին:

/Զեկուցող՝ Ա.Քամալյան/

ԼՄԵՑԻՆ - Հարցի մասին զեկուցմամբ հանդես եկավ կրթական ծրագրի պատասխանատու Ա. Քամալյանը: Նա նշեց, որ շատ կարևոր է նոր կրթական ծրագրի մշակումը: Դա կնպաստի ԵՊՀ ԻՄ-ի և ֆակուլտետի ռազմավարական ծրագրերի իրականացմանը: Կրթական ծրագրի նոր մշակված տարբերակը կօգնի ուսումնառության և գնահատման բազմազան ու արդիական մեթոդների ճիշտ ու նպատակասլաց կիրառմանը: Նա առաջարկեց քննարկել հայտի ձևաչափը, ուսումնական պլանի նախագիծը, ծրագրի ընդհանուր կառուցվածքային նկարագրությունը, բակալավրի հիմնական, մասնագիտական, հատուկ մասնագիտական և կրթական այլ մոդուլների բովանդակությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Մելիքսեթյանը, Հ.Սայադյանը, Ի.Պոնոմարենկոն:

Վ. Մելիքսեթյանն առաջարկեց մշակել ուսանողների աջակցման ծառայություններ և ստեղծել անհատականացված ռազմավարություն՝ օժանդակելու ուղղորդման կարիք ունեցող ուսանողներին: Նա նշեց, որ նոր ծրագրի կրթական վերջնարդյունքները կապահովեն որակի ժամանակակից պահանջները,

շրջանավարտների կարիերայի հնարավորությունները, կապահովեն միջազգային չափանիշները: Առաջարկեց նաև վերանայել առարկայական ուսումնական փաթեթները՝ դրանք համապատասխանեցնելով ուսումնական պլանի ընդհանուր կրթական կառուցամասին:

Իրինա Պոնոմարենկոն ծրագրի նպատակների հաջող իրականացման համար առաջարկեց կիրառել ժամանակակից նոր տեխնոլոգիաներ, էլեկտրոնային դասախոսություններ, առցանց ուսուցում: Նա նշեց, որ պետք է ամբողջացնել դասավանդման և ուսումնառության արդիական տարածված մեթոդները, այն է՝ ինտերակտիվ մեթոդների կիրառությունը և գրավոր աշխատանքների իրականացումը թեզիսների, թեստերի, էսսեների, շարադրությունների և ռեֆերատների ձևով:

Հ. Սայադյանը նշեց, որ ՏՄՄ կրթական ծրագիրն իրականացնող բոլոր դասախոսները ապահովում են «Լիցենզիայի մասին» օրենքով սահմանված ձևաչափի պահանջները: Հաշվի առնելով այն փաստը, որ գիտության ոլորտում անընդհատ տեղի են ունենում նոր նվաճումներ, ուստի մեծ նշանակություն պիտի ունենան մասնագիտական վերապատրաստումները:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել «Ընդհանուր մանկավարժություն» կրթական ծրագրի վերամշակման աշխատանքային խմբի առաջարկությունները:

Նախագահ՝
Քարտուղար՝

Լ. Հարությունյան
Լ. Ստեփանյան

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ԵՊՀ ԻՄ-ի «Պատմություն» կրթական ծրագրի վերամշակման աշխատանքային խմբի 2017թ. նոյեմբերի 23-ի նիստի N 5 արձանագրությունից

Նիստին մասնակցում էին Ս. Առաքելյանը, Դ. Թինոյանը, Վ. Ալեքսանյանը, Ա. Փաշինյանը, Լ. Բեգինյանը, Է. Խոջայանը և Վ. Գևորգյանը:

Հրավիրված էին «Հայոց պատմության և հասարակագիտության» ամբիոնի դասախոսները:

Լսեցին- «Պատմություն» կրթական ծրագրի առաջարկի հայտի քննարկման հարցը:

(զեկ. Ա. Ներսիսյանը)

Զեկուցող Ա. Ներսիսյանը աշխատանքային խմբին մանրամասն ներկայացրեց «Պատմություն» կրթական ծրագրի առաջարկի հայտը: Ամփոփ ներկայացվեց այն աշխատանքը, որը կատարել է աշխատանքային խումբը հայտի կազմման համար: Ընդգծվեց, որ հայտի կազմման ժամանակ հաշվի են առնվել և արտաքին և ներքին շահակիցների կարծիքներն ու առաջարկները:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հայտի նեկայացնել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի քննարկմանը:

Նախագահ՝ Ա. Ներսիսյան

Քարտուղար՝ Ն. Գրիգորյան

ՔԱՂՎԱԾՔ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի «Անգլերեն լեզու և գրականության» կրթական ծրագրի վերամշակման աշխատանքային խմբի՝ կրթական ծրագրի առաջարկի հայտի քննարկման առիթով/թ նոյեմբերի 22 – ին կայացած N 5 նիստի արձանագրությունից

Ներկա էին Ք. Հարությունյանը, Ա. Չուբարյանը, Գ. Մուրադյանը, Ն. Երնջակյանը, Է. Թեմրազյանը, Ն. Գասպարյանը, Ա. Կարապետյանը, Զ. Անտոնյանը, Մ. Խաժակյանը, Ս. Էվինյանը, Շ. Գրիգորյանը, Ա. Միմոնյանը, Զ. Միլիտոնյանը, Ա. Օթարյանը:

ԼՄԵՑԻՆ – Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ Ա. Միմոնյանը ներկայացրեց 2018 – 2022թթ. կրթական ծրագրի առաջարկի հայտի քննարկումը: Զեկուցողը նշեց, որ հայտի վերջնական տարբերակը կազմելու համար հաշվի են առնվել նախորդ քննարկումների արդյունքները: Ծրագրի շրջանակում տեղի են ունեցել հանդիպումներ և քննարկումներ դասախոսների, գործատուների ներկայացուցիչների, շրջանավարտների ներկայացուցիչների և ուսանողների հետ:

Նախորդ քննարկումների արդյունքներն ամփոփելով կրթական ծրագրի վերամշակման աշխատանքային խումբը եկավ այն եզրակացության, որ պետք է ուշադրություն դարձնել դասավանդման ժամանակակից մեթոդներին՝ օգտագործելով համապատասխան տեղեկատվական տեխնոլոգիաներ: Հաշվի առնելով, որ ծրագիրը բակալավրիական է, անհրաժեշտ է շեշտը դնել գործնական և ինքնուրույն աշխատանքների վրա, որպեսզի արդյունքում ունենանք աշխատաշուկայում մրցունակ մասնագիտական և հաղորդակցական հմտություններով հարուստ կադրեր: Վեր հանվեցին դասախոսների վերապատրաստման կարիքները, որտեղ կարևորվեց ոչ միայն մասնագիտական վերապատրաստումը այլ նորարարական մեթոդներով դասապրոցեսն իրականացնելու դասընթացների անհրաժեշտությունը: Ա. Միմոնյանը հավելեց, որ դասախոսների վերապատրաստման համար ունենալ հատուկ ժամանակացույց և վերապատրաստումը կարելի է կազմակերպել օնլայն եղանակով, նախօրոք կապ հաստատելով միջազգային Teacher Trainer-ների հետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Գ. Մուրադյանը, Զ. Անտոնյանը, Ք. Հարությունյանը, Ն. Գասպարյանը, Է. Թեմրազյանը նշեցին, որ ծրագիրը միակն է տարածաշրջանում, որը, բացի հիմնական օտար լեզվից, տալիս է նաև երկրորդ օտար լեզվի ուսուցման հնարավորություն:

Նրանք նաև հավելեցին, որ ուսանողների պրակտիկայի անցկացման համար նախընտրելի է Դիլիջանի միջազգային դպրոցը, Կենտրոնական բանկը և Մ. Մելքոնյանի անվան զինվորական հաստատությունը, որոնց հետ նախօրոք պետք է պայմանավորվել (թարգմանիչներ):

ՈՐՈՇԵՑԻՆ – Դասախոսների մասնագիտական վերապատրաստում անցկացնել Բրիտանական խորհրդի գրասենյակում և ԵՊՀ-ում TOEFL, IELTS միջազգային թեստերի նախապատրաստման համար:

Նախագահ՝

Ք.Հարությունյան

Քարտուղար՝

Ա.Օթարյան

ՔԱՂՎԱԾՔ

ԵՊՀ ԻՄ –ի ՀԳ ֆակուլտետի ֆրանսերեն լեզու եվ գրականության ամբիոնի «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի վերամշակման աշխատանքային խմբի՝ կրթական ծրագրի առաջարկի հայտի քննարկման առթիվ սթ. նոյեմբերի 22-ին կայացած նիստի N 1 արձանագրության

Ներկա էին Ա.Մարդանյանը, Մ. Ադբալյանը, Ս.Օհանյանը, Դ. Մարգարյանը, Գ. Գասպարյանը, Թ. Ամիրադյանը, Տ. Բադալյանը:

Օրակարգ

1. Կրթական ծրագրերի առաջարկի հայտի քննարկում:

Զեկուցող՝ ասիստենտ Ա. Մարդանյան

ԼՍԵՑԻՆ- Ա. Մարդանյանի զեկուցումը կրթական ծրագրերի առաջարկի հայտի քննարկման մասին: Զեկուցողը նշեց, որ օտար լեզուների ուսուցումը ներկայումս առանձնահատուկ տեղ է զբաղեցնում: Պայմանավորված աշխարհաքաղաքական հաղորդակցության և տեղեկատվական վերափոխումներով՝ այն նպաստում է միջպետական ինտեգրացիային: Ժամանակակից մարդու կենսագործունեության հաջողության գրավականը բազմամշակութային և բազմալեզու հասարակության մեջ օտար լեզուների իմացությունն է: Օտար լեզուն մասնագիտություն լինելուց վերածվում է միջոցի՝ մասնագիտությունների համար: Ահա թե ինչու, օտար լեզվի ուսուցման նպատակի իրականացումը կապված է ոչ միայն միջմշակութային հաղորդակցության, այլ նաև բազմամշակութային տարածքում մասնագիտական հաղորդակցության կարողությունների զարգացման հետ:

Հետևապես օտար լեզուների դասավանդման մեթոդիկան մշտապես կատարելագործման և արդիականացման կարիք ունի, որին էլ միտված է նոր ծրագրի ներմուծումը: Ինչպես նշված է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի առաքելության մեջ, մասնաճյուղը ազգային և տարածաշրջանային ռազմավարական դերակատարությամբ կրթական և գիտամշակութային հաստատություն է, որի գլխավոր առաքելությունը գիտելիքի ստեղծումը, փոխանցումն ու տարածումն է: Այս

առաքելությունն է միտված որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշներին համապատասխան վերամշակված բակալավրի կրթական ծրագիրը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Մ. Աղբալյանը, Ս. Օհանյանը, Դ. Մարգարյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ իսկապես անհրաժեշտ է վերափոխել կրթական գործող ծրագիրը՝ այն մոտեցնելով ժամանակակից տեխնոլոգիաներով դասավանդման մեթոդներին:

ՈՐՈՇԵՑԻՆ- Քննարկումների արդյունքում որոշվեց հավանության արժանացնել 2018-2022 թվականների «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագիրը՝ հաշվի առնելով ծրագրի վերամշակման աշխատանքային խմբի առաջարկությունները:

Նախագահ՝	Ա. Մարդանյան
Քարտուղար՝	Գ.Գասպարյան